

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԲԱՅԱԶԻԴ

ԲԱՅԱԶԻԴ կամ ՊԱՅԼԶԻՏ. Գղ. BAYAZID.
— Պատմական նշանաւոր զինուոր քաղաք,
Կարնոյ նահանգի Համանուն գաւառի մէջ:
Ըստ ազգային Հին աշխարհագրական բա-
ժանման՝ քաղաքս կ'իյնայ Այսրաքառայ

Կողովիտ գաւառի մէջ: Ի Հնումն ծանօթ է
Դարոյնք հռչակաւոր բերդի անուամբ, այդ
պատճառաւ տեղւոյս Հին պատմական դէպ-
քերն կը նկարագրենք իրենց կարգին Դա-
րոյնք անուան ներքոյ: Եւ զարէն սկսեալ
մինչև ցայժմ կոչուած է Բայազիտ, և ինչ-
պէս Հին Դարոյնք հայկական բերդն հռչակա-
ւոր եղած է պատմութեան մէջ, նոյնպէս և
սա ոչ նուազ նշանաւոր եղած է նոր պատ-
մութեան մէջ, բազմադիմի պատերազմա-
կան դէպքերով: Կը կարծուի թէ քաղաքս
իւր անունն առած ըլլայ, Օսմանեան Սուլ-



ԲԱՅԱԶԻԴԻ ԲԵՐԴԷ՛:


տան Բայազիդ Ա՛ն, և թէ անոր հրամանաւ
շինուած է, ընդդէմ Լէոկիթիմուրի մղած պա-
տերազմերու ժամանակ, սակայն շատ հաւա-
նական չի թուիր այս կարծիքն, որովհետեւ
նոյն ժամանակները Օսմանեանք զեռ այն-
չափ առաջ գաղտնի անցած և
Մեծ Հայոց մէջ մտած չլին: Մեր պատ-
միչներէն առաջին անգամ Առաքել (Գղ. Լ)
կը յիշէ նոր անունն՝ գրելով Բերդն Բիւզ-
սի, զոր հանած է 1454ին գրուած Յայամ-
տուրքի մը յիշատակարանէն: Սուլթան Սէ-
լիմ Սիւլեյման որդւոյն արշաւանաց ժամա-

նակ 1554ին, Թուրքաց զօրքերը բանակե-
ցան Բայազիդի բերդին մօտ, որ նոյն առնն
աւերած էր: Երբ Օսմանեանց տէրութիւնը
Հայաստանի տիրեց Շահսէֆեանց ձեռքէն
անելով, ժամանակին սուլթանները Բայա-
զիդի կողմերը յանձնեցին մերձաքնակ Գըր-
գաց ձեռքը, որոնց զինուոր տոհմն կը կո-
չուէր Սիւլեյման, անոր համար գաւառն ալ
կոչուած կը գտնենք Սիւլեյման: Այս Բերդերը
բերկ կէս տիրապալտի կ'իշխէին այս կողմանց
վրայ, որոնց իշխանութիւնը հասաւ գրեթէ
մինչև մեր օրերը:

Արցեայ դարու սկիզբը (1705-ին) կը յիշուի Մեհմեդ Կեկ Բայազիդի իշխող, որուն ձեռքէն բերդն աննկղձ Սիւլեյման Կեկը զինքը կը խզէ, որով և մեծ խռովութիւն կը լինի: Իսկ նոյն դարու վերջերը կը պայազատէ Մամուշու փաշայ, որ հոջակաւոր է ասորիւն բնակաւորութեամբը, ինչպէս նաև պերճասիրութեամբը, որուն յիշատակներն կը մնան տակաւին (բայց զրեթէ աւերակ) ճարտարաշէն և հոյակապ մզկիթը և պալատը. որոնց շինողն է հայ ճարտարագետ մը,

անունը նոյայտ, բայց զորոն անմահական և հիացուցիչ բազմաթիւ երոպացի ճանապարհորդաց:

Բայազիդ բազարը կառուցուած է Ալաուդ կոչուած լեռան կողմէն վրայ՝ զետեղուած Գոլը տաղ և Շարսն բարաբլուրներու մէջ, զրեթէ 5735՝ բարձրութեամբ, Կռեստիկ զետակի մօտ, որուն վրայ ձգուած է զեղեցիկ, միակամար և բարաշէն կամուրջ մը, հայէ մը կառուցուած: Քաղաքին հիսուսային կողմը Առտուկ դար բարձրագոյն



ՀԱՅ ԺԱՐՏԱՐԱԳԵՏԻՆ ԵՒՆՈՒՄՆ ԲԱՅԱՋԻԻ ԳԱՒԱՏԸ ԵՒ ՄԶԿԻԹԻ:


բարաթայի վրայ կը բարձրանայ հինաւորաց բերդը. զերմանացին վախներ, «յանգուշն և հրաշակներս շէնք մը է, կ'ըսէ, այնպիսի տեղերու վրայ հաստատուած, ուր բազէներն ու անդրները հազիւ թէ կը համարձակին բոյն գնելու»: Սա է բուն հին Դարոշնից բերդը, որ յետին դարուց մէջ նորոգուելով հանդերձ՝ տակաւին հին կ'երեւի, զոր եւրոպացիներէն ամանոր համարեցան ժԲ կամ ժԳ դարու գործ: Լեռան բոլոր բարացած ստաներուն վրայ կան մէկ մէկ բարձր և բու-

լորշի աշտարակներ պարիսպները. լեռան ձեւոյն համեմատ կը շրջապատեն: Ուրեմն անոթներու պիտէն առաջ բաղաբս և բերդս՝ մեր աշխարհի ամուր բաղաբներէն մին կը համարուէր, ձեռագործ ամբուրթներէն աւելի բնական գեղեցիկ, ապառաժու ցցուած լեռներով և կիրճերով:

Բերդի զրան մօտ կառուցուած է սպիտակ և կարմիր քարերով բոլորագործ մզկիթ մը, իսկ փաշայի կարմրաքար հոյակապ պալատը բիշ մը աւելի վար է պարսպապատ գա-

հաւանդի մը վրայ։ Մեծ գահին զարդա-
րում էր զանազան դրուագներով և ծաղ-
կանց ու թռչնոց նկարներով։ Մզկիթի
մօտ կը գտնուին բերդի կառուցանողի Մահ-
մուտի և իր կնոջ կճեայ շէրիքներն։ Մի
բանի զուրկ և խոռոչներ կան այս ապա-
ռաժուտ վայրերը, որոցմէ միոյն մէջ, շատ
տարիներ բանտարկել մնաց բռնաւոր փաշա-
լէն, գաղղիացի ժողովրդի գիտնականը, որ
Նափոլէոն մեծէն զետպանութեամբ զրկուած

էր Պարսկաստան, 1805 թուին։ Այժմ
բնակիչը շատ բաներ կը պատմեն Մահմուտ
փաշայի վրայ, որ ազգաւ քուրդ էր և մահ-
անումս Գեղ, վայրագ բայց մեծահոգի։
Սա ուզելով յոյժ չքնաղ և փառաւոր պա-
շատ մը շինել կանչեր և քններ է բոլոր
ճարտարապետները, և վերջապէս ընտրեր
է հայազգի մը և շատ հաւանք է անոր գոր-
ծին։ Բայց չար նախանձով, որպէս զի ուրիշ
մը ալ իրենին նման ապարանք չշինէ, ճար-



ԱՐՇԱԿ ՏԵՐ ԳՈՒԿԱՍՈՎ։

տարապետին ձեռքերը կարել տուեր է, որով
և մարդը մեռեր է։ Գիշ ժամանակ վերջը
ժանտախտէ բռնուելով մեռեր է նաև բռնա-
ւորը, ինչպէս նաև իւր որդին և յաջորդը
Ահմետ, որուն յետոյ յաջորդի բանտապետ
Պահլիշը, որուն օրով հայազգի բանտապե-
տին մեծանշանութեամբ վերայիշեալ ժողովր-
դի մեծանշանութեամբ և բանտի գործի մօտ
գաղղիացի ազատներ է։ Բանտի գործի մօտ
գաղղիացի ազատներ է։ Բանտի գործի մօտ
գաղղիացի ազատներ է։ Բանտի գործի մօտ

նիւ անցքին մէջ, կայ նշանաւոր հնութիւն
մը՝ քանդակուած ժայռին վրայ։ Ինչպէս
պատկերէն կ'երևի, բանդակուած են երկու
քուրմեր՝ հայկական սաղաւարտաձեւ խոյ-
րերով և մէջտեղը բազինի վրայ նուիրա-
կան եղջերու մը։ Գուրմերէն մին անմօրուս
ձեռքը բռնած կը թուի գաւազան մը, իսկ
միւսն ձեռքունի է և ձեռքերը բարձրացուցած
կ'ապօթէ։ Նորանոր մանր քննութեանց և

խաղարկութեանց կը կարօտին լեռնայն բար-
անձաններն: Գննելի են նաև Ս. Գրիգոր
կոչուած եկեղեցոյ աւերակներն, որուն մօտ
է Լուսաբերկը ուխտատեղին:

ԺԷ դարու կիսուն կը յիշուին բաղաբիւ
մէջ 2000 Հայոց տուն. իսկ Թուրքաց և
Ռուսաց առաջին պատերազմաց ժամանակ
ունէր 1735 տուն Հայոց և 340 տուն մահ-
մետականաց՝ չորս թաղերու մէջ, որոց ա-
նուանք են Բաւանիկ, Զիւլախանէ, Տեկե-
լիկ և Ապտիկոր կամ Ապրիկոր, վերջնոյս
մէջ էր Հայոց Ս. Վարդան եկեղեցին: Պար-
սից 1824 տարւոյ պատերազմէն և սրա-
ծուծենէն, շատ վտանգուած էր Բայազիդ,
և հազիւ թէ քիչ մը հոգի առած էր, սկը-
սաւ 1828ին մեծ կոխը. որուն մէջ Պահ-
լիւ փաշան, ծածկապէս Ռուսաց կողմէն էր
և պատերազմել կը զգուշանար. բայց երբ
Քրդաց հրոսակախումբը սկսաւ թշնամանալ
Ռուսաց, ինքն ալ անոնց հետ ոտք ելաւ:
Ռուսաց զօրավար վրացի Զուլեւաջէ իշխա-
նը, անցնելով Խաչկիտառէկ լեռնանցքէն (օ-
գոստոս 28ին) վանից Թուրքաց հնծելա-
զօրէն դունդ մը, և բանակ դրաւ բաղաբիւ
մօտ Զանկիզօրի մէջ: Քրդաց դունդ մ'ալ վա-
նելէ վերջ, քիչ ուժակոծութեամբ Բայազիդի
տիրեց (29 օգոստ.) և Պահլիւ անձնատուր
եղաւ: Յաջորդ տարին (1829) յունիկի կի-
սուն Վանայ փաշան եկաւ բաղաբս պաշա-
րելու և ամենելու զօրաւոր գնդով, զոր Ռուս-
ները բաւական ամրացուցած էին, որոնց
հետ միացան և զենք տօին ինքնակամ հա-
լար Հայք, և բաժնուեցան զունդ զունդ ամ-
բոցի գանդաղան կողմերը. բայց չկրցան Թուր-
քաց բազմութեան դէմ փնել, որոնք յետ սաս-
տիկ պատերազմի տիրեցին պարսպաց և ա-
րեւելեան մարտկոցին. սակայն չկրցան տիրել
բաղաբիւ և վերջապէս ճարահատեալ 2000
մարդ կորսնցնելով եւս պարձան, և քրիստոնեա-
ներէն մեծան գրեթէ 500 հոգի: Այս պատե-
րազմի մէջ բաջլութեամբ և հնարագիտու-
թեամբ մեծապէս հռչակուեցան Պանխոտիկ
և Պոպոլ զօրավարները, որոնց հետ նաև
ոչ սակաւ Հայք, յորս նշանաւոր են Բար-
սեղ և Մկրտիչ Բայազիդեցիք: — Հաշուու-
թենէ վերջ Հայերէն շատերը քաղթեցին Ռու-

սաց բաժինը. Պանիլիզ դարձաւ նորէն Բա-
յազիդ, թեպէտե քիչ մը տանն զրկուեցաւ
իշխանութենէն, ճէլալի քրդերը չսանձահա-
րելուն պատճառաւ և տեղը դրուեցաւ Տեմիր
փաշայ, բայց շուտով վերահաստատուեցաւ
Պահլիւ իւր հայրենի ճոխ պալատէն իջնե-
լով բնակեցաւ բաղաբիւ տներէն միոյն մէջ.
ոչ միայն հոյակապ պալատը անշրջացաւ,
այլ և գրեթէ բոլոր բաղաբը ոչնչացաւ, ի-
րարու յաջորդող նորանոր սպաներազմաց
պատճառաւ: Ռուսները երկրորդ անգամ տի-
րեցին բաղաբիւ 1854 թուի յուլիս 29ին.
բայց ամէնէն աւելի բազմադէտ պատե-
րազմն եղաւ 1877ին: Հայկազն Ալլաակ
Տէր Ղուկասով Ռուսաց զօրավարը իկարի
կողմերէն գալով (ապրիլ 26ին) և անցնելով
Զինկիլ լեռներէն մօտաւ Կողովտա, և Արծափ
գիւղի արեւմտակողման Դաւառ լեռնէն եւս
անցնելով, նախ տիրեց Զանկիզօրի և յե-
տոյ մայիսի սկիզբը մօտաւ Բայազիդ, ուս-
կից Ալի Բեւաւիլ փաշան անպատրաստ լի-
նելով զինուորաց հետ խոյս տուած էր, բա-
ղաբը յանձնելով Ռուսաց մարդասիրութեան:
Հայ և մահմետական բաղաբացիներէն մեծա-
րանքով ընդունուեցան Ռուսք՝ և փութով
նորոգեցին բերդի և մարտկոցներու պարիսպ-
ները, և թովով 2000 պահապաններ գնա-
ցին (մայիս 8ին) Դաւիթան և Բազրեւանդ:
Ռուսաց բուն բանակին բաղաբիւ սահման-
ներէն հեռանալէ վերջ, Վանայ կուսակալ
Պաշիք փաշան, բազմաթիւ վայրաց Հայաւա-
րանի բրդերը և առաջնորդութեամբ ճէլա-
լեւտիկ և Իսպատ Ռաշաճ զլխաւորաց, յար-
ձակեցաւ բերդին վրայ (յունիս 18ին), ա-
հաւոր դէպքեր չմտց որ չկատարուէին նոյն
օրերը: Մոլեղին բուրդերը ամբողջ բաղաբը
հրով և սրով փճացուցին, կենդանի մնացած
մարդիկ ալ սրէ անցուցին կամ դիմ տա-
րին, գրեթէ Հայերէն 300 տուն. միայն 100
տուն աղանեցան և փախան Մակուայ և
Կարսի սահմանները: Սակայն բերդի մէջ
սպասարանածներն ստակաւն կը դիմանային
ոսոտիկ ծարաւի և սովու, վասն զի ջրի ճա-
նապարհն թշնամին արգիլած էր, և ան-
պուծ կ'ուտէին մինչև անպամ ձիու միւս:
Այսպիսի վիճակով բերդի միջի Ռուսք և Հայք

զիմացան երեք շաբաթ, և գումական զրկեցին հայ Ապարանցի պատանի մը, որ Քրդաց տարող ձյաղիով և խնդ ձեւանալով անցաւ թշնամաց միջին և լուր տարաւ Ռուսաց բանակին: Յուլիս 10ին հասաւ Տէր Ղուկասով և թուրքաց երկու գումակերը ցրուեց, որոնց օգնութեան չկարենալով հասնիլ Ֆայիք՝ որ բանակած էր Թէկէրիզ գիւղը, պաշարուաւ վերցուց և մեկնեցաւ: Այս պատերազմի մէջ Ռուսը կորսնցուցին 120 հոգի և Քովալեւքի հրամանատարը, ունեցան 300 վիրաւոր և մնացած զօրքն ալ տկար և հիւանդոս լինելով, զրկուեցան առողջանալու տեղեր. սառնց հետ մեկնեցան նաև Քրդաց կոտորածին ազատած Հայք՝ աւերակ և ամայի դարձած քաղաքի բնակիչք: Յետոյ կիսաւեր բերդովն հանգերձ քաղաքս ձգեց Տէր Ղուկասով և դարձաւ Իդտիր: Այս պատերազմի պատմութիւնն զեղեցիկ կերպով վիպասանօրէն գրած է Ռաֆֆի:

Քաղաքին բնակչութիւն այժմ կը համարուի 2000, հետեւալ կերպով բաժնուած.

Հայք Լուսաւորչական	1200				
Մահմետականք	<table> <tr> <td>Թուրքք</td><td>235</td></tr> <tr> <td>Քուրդք</td><td>454</td></tr> </table>	Թուրքք	235	Քուրդք	454
Թուրքք	235				
Քուրդք	454				
Այլ և այլք	151				
Գումարն...	2000				

Հայք ունին Ս. Կարապետ քարաշէն՝ բայց փայտայարկ եկեղեցի մը. շինութիւնն շատ հին չէ, ինչպէս կը յայտնեն շինութեան և նորոգութեանց արձանագրութիւնք՝ որք կը վերաբերին 1754—1879 թուականներուն. 1818ին դարձեալ նորոգուեր է, Եփրեմ կաթողիկոսի ժամանակ: Հնազոյն եկեղեցին Ամենափրկիչ՝ որ կը գտնուի քաղաքին արեւմտեան հարաւակողմը, Հայոց նոր գերեզմանաց մէջ, այժմ բոլորովին բայքայած և աւերակ դիճակի մէջ է: Ունի մի քանի պալատաւոր կիսեղծ արձանագրութիւններ: Կ'աւանդեն՝ թէ այս եկեղեցւոյ մէջ թաղուած է Սմբատ անունով Հայոց սպարապետ մը. հոս կան նաև և կը պատուին Թուշն մանուշ, Ս. Սիմոն և Ղըզոյ և Գաւեհի աղբիւր, նուիրական ուխտատեղիք: Հայքնասեր և քաջ խուզարկու ձեռաց բնու-

թեանց կը կարօտին այս աւերակ դարձած նուիրական վայրերն և Գարօնից բերդի մնացորդներն:

Այժմեան Բայազիզ գաւառին սահմանըն են՝ հիւսիսէն Ռուսաստան, արեւելքէ՝ Պարսկաստան, հարաւէն՝ Վանայ նահանգն և արեւմուտքէն՝ Խոնուս և Բասեն գաւառակները: Բաժնուած է հինգ վիճակաց Բայազիզ, Տիւստին, Գարա-Գիլիս, Աւաշկերտ և Անթազ, որոնք ունին 418 գիւղ և 8448 տուն: Այս վիճակագրութիւնն է ըստ Քինէի, ինչպէս նաև գաւառիս բնակչաց թիւն՝ որ է 52544, հետեւեալ ազգութիւններէ ձեւացած.

Մահմետականք	41471	հոգի
Հայք Լուսաւորչականք	8632	»
» Կաթողիկէայք	1734	»
» Բաշլքականք	99	»
Այլ և այլք	568	»
Գումարն...	52544	հոգի:


— Այսրատ, 499—507: Նոր Հայաստան, 113—114: Վ. Քիւնե, Ա 228—234: Եւ այլն:

ԲԱՅԱԶԻԴ ՆՈՐ ԿՈՒ ԳԱՒԱՌ

ԲԱՅԱԶԻԴ ՆՈՐ ԿՈՒ ԳԱՒԱՌ. — Գաւառագլուխ քաղաք Նոր Բայազիզի, կը համապատասխանէ հին Գաւառ աւանի, և կ'իյնկ նայ Սինեաց Գեղարքունի գաւառի մէջ, համարուն գետի մօտ, գրեթէ չորս մղոն ծովեկերէն հեռու, Երեւան տանող արբունի ճանապարհի վրայ, և Անեղի հիւսիսային կողմը մղոն մը հեռաւորութեամբ: Հետցհետէ լազմամարդ եղած և քաղաք դարձած է հին Բայազիզի զաղթականներով և այդ պատճառաւ այժմ կը կոչուի Նոր-Բայազիզ. հին Գաւառ անունը քիչ անգամ կ'երեւի գրոց մէջ, և Սինեաց պատմիչ գիւղերու ցուցակի մէջ չի յիշուիր: Քաղաքին արեւելեան կողմը վայելչագոյն ձորակի մը մէջ քարաբլրի վրայ կան ժջուր զարու վերաբերեալ տապանաքարեր: Այս գերեզմանատեղին ի հնուն մէկ կողմէն սարբու-

պնած էր բերդի ձեւով, այն պատճառաւ
Բերդի գոթիս կը կոչուի. մօտը կան քարայր-
ներ և ձեռագործ սենեակներ, և մէկ մըս-
նէն աւելի երկայնութեամբ զեանափոր ճա-
նապարհ մը, որ դէպի գետը կը տանի. հոս
զանուեցան կաւեղէն կուրքեր՝ աչքերուն ու-
լունք ապուցուած: Խանդարուած լինելով հին
եկեղեցին, փայտով ծածկեցին զաղծական-

ները և կոչեցին Ս. Կարսպետ, իրենց հայ-
րենեաց հին Բայազիդի եկեղեցւոյն անուամբ:
Ուրիշ մեծ եկեղեցի մ'ալ կառուցին Ծիրա-
նաշոր Ս. Աստուածածին անուամբ, որուն
շինութեան նիւթապէս շատ նպաստեց Բար-
սեղ Աղա Արծրունիէն: Քաղաքիս վաճառա-
կանութիւնն շատ զարգացած չլինելով, թէև
ոչ սակաւ հարուստներ մեկնեցան ասիէ,



ՆՈՐ ԲԱՅԱԶԻԴ — ԳԱՒԱՌ:


սակայն այժմ ունի 1128 տուն և 7488
բնակիչ. յորոց հաղիւ 50 հոգի օտարազգի
կը գտնուի, մնացեալը ամբողջ Հայք են:
Քնակիչը աւելի երկրագործական շահերով
կը զբաղին քան թէ արուեստներով և առեւ-

Քաղաքիս զերեզմանաց մէջ, վերայեւալ

բերդատեղւոյն զաղաժը կայ Ս. Ստեփաննոս
մատու մը: Գերեզմանաբարերը զարդարուած
են զեղեցիկ քանդակներով, ուր կը տես-
նուին փորուած զգեստուց տարազներ, զա-
նազան զէնքերու ձեւեր, արհեստաւորաց գոր-
ծիներ և մեր իշխանաց շքանշաններ. բայց
այս յիշատակաց քարերէն շատերը անխայ

կերպով բակած և զործածած են եկեղեցւոյ շինութեանս։ Ս. Յովնանէն յիման (մարդ) կոչուած տափարակին մօտ կը գտնուի Ս. Գեորգ անուամբ ուխտական մատուղը։ Եկեղեցւոյ սպարտուց մէջ կան բանի մը սրբաւ

զան մատեաններ, Մեծին Ներսիսի բազկի նշխարը, երկու երկաթեղէն խաչեր՝ մէջտեղերը ունենալով ակունքներ՝ որոնց համար աւանդարար կ'ըսեն, թէ շինուած են Ս. Թադէոսի ձեռօր՝ այն կոնքէն՝ որուն մէջ ման



ՆՈՐ ԲԱՅԱԶԻԴԻ ԵԿԵՂԵՑՈՒՅՍ ՍԱԿԱՆԵՐԸ։

կացեալ փրկիչը լուսացուցաւ։ Մեր ներկայացուցած պատկերի մէջ կը տեսնուին բաղաքին եկեղեցւոյ սպասներէն նշանաւորները։ Ասիկց փոխադրուած է յԷջմիածին Ս. Աստուծոս և Մատթէոս տառերեղց նշխարաց արծաթէ տապանակ մը, որ նորոգուած

է 1725 թուին Գաւառեցի Սիւսեան վարչապետի հրամանաւ։ Նոր Բայազիդի գաւառն ըստ լիճակաց և ունի 96123 բնակիչը՝ յորոց 61367ը Հայք են։ — Զալպեան, Բ 124—125։ Սիւսեան, 42—45։

Հ. ՍՈՒՐԻԱՍ ԷՓՐԻՍԵԱՆ